ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի Հոկտ. Նոյ. 29-ի № 128-Լ

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 39-րդ հոդվածի 8-րդ մասով, Հաշվեքննիչ պալատը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Սահմանել, որ հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում չհանդիսացող՝ Հաշվեքննիչ պալատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի՝

1) բարձրագույն պաշտոններ,
2) գլխավոր պաշտոններ,
3) առաջատար պաշտոններ,
4) կրտսեր պաշտոններ:

2. Հաշվեքննիչ պալատի մեթոդաբանության և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունում սույն որոշման 1-ին կետով սահմանված պաշտոնների խմբերում ընդգրկվում են հետևյալ պաշտոնները՝

1) բարձրագույն պաշտոն՝ վարչության պետ,

2) գլխավոր պաշտոն՝ վարչության պետի տեղակալ, գլխավոր մեթոդաբան, տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարիչ-աուդիտոր, տեղեկատվական տեխնոլոգիաների գլխավոր աուդիտոր,

3) առաջատար պաշտոն՝ ավագ մեթոդաբան, տեղեկատվական տեխնոլոգիաների ավագ աուդիտոր,

4) կրտսեր պաշտոն՝ կրտսեր մեթոդաբան, տեղեկատվական տեխնոլոգիաների կրտսեր աուդիտոր:

3. Հաշվեքննիչ պալատի աուդիտի, էթիկայի և որակի հսկողության կոմիտեների գործունեության ապահովման և ներքին աուդիտի բաժիններում սույն որոշման 1-ին կետով սահմանված պաշտոնների խմբերում ընդգրկվում են հետևյալ պաշտոնները՝

1) բարձրագույն պաշտոն՝ բաժնի պետ,

2) գլխավոր պաշտոն՝ գլխավոր աուդիտոր,

3) առաջատար պաշտոն՝ ավագ աուդիտոր,

4) կրտսեր պաշտոն՝ կրտսեր աուդիտոր:

4. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2024 թվականի դեկտեմբերի 11-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ